

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծրունի Աղաջանյանի, Գագիկ Բաղդասարյանի, Իշխան Խաչատրյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 31-րդ կետով «հայե, «Հայաստանե, «հայկականե բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար սահմանված է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 600-ապատիկի չափով: Ներկայացված նախագծով առաջարկվում է «հայե, «Հայաստանե, «հայկականե, «հանրապետությունե, «հանրապետականե բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու համար պետական տուրքը սահմանել ոչ թե յուրաքանչյուր տարի, այլ միայն մեկ անգամ: Նախագծով առաջարկվող՝ օրենքի 20-րդ հոդվածի 31-րդ կետի խմբագրությունը կրկնում է «Ֆիրմային անվանումների մասին և «Պետական տուրքի մասին Հայաստանի

Հանրապետության օրենքների նախկին՝ մինչև 1998 թվականը գործող դրույթները, որոնք փոփոխվեցին, քանի որ համարվեցին անհամարժեք:

Ըստ նախագծի հիմնավորման՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կատարած ստուգումները ցույց են տվել, որ 100-ից ավելի կազմակերպություններ չեն վճարել 700.0 մլն դրամի չափով պետական տուրքի գումարներ, այսինքն՝ ընդունված իրավական նորմը չի ընդունվում իրավաբանական անձանց կողմից: Բացի դրանից, վերահսկողության մեխանիզմի բացակայության արդյունքում այդ մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերն աննշան են:

Ինչպես ներկայացված տվյալները, այնպես էլ մոտեցումներն ու որակումները հիմնավորման և հստակեցման կարիք ունեն: Անհասկանալի է, թե ո՞ր 100 կազմակերպությունների մասին է խոսքը, ինչի՞ հիման վրա և ի՞նչ մեթոդաբանությամբ է հաշվարկված «պակաս վճարված 700.0 մլն դրամը»:

Եթե խոսքը վերաբերում է մինչև «Ֆիրմային անվանումների մասին» 1997 թվականի մայիսի 12-ի ՀՕ-116-Ն օրենքը (որի 3-րդ հոդվածով սկզբնավորվեց թույլտվությունների տրամադրումը) ուժի մեջ մտնելը (01.09.1997 թ.) պետական գրանցում ստացած կազմակերպություններին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական տուրք վճարողներ են համարվում պետական մարմինների լիազորություններով պայմանավորված՝ պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ուստի, տարեկան պետական տուրքի վճարման պարտավորություն կարող է առաջանալ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլտվություն ստանալու (պետական տուրքի գանձման օբյեկտի առկայության) դեպքում:

Միաժամանակ, «Ֆիրմային անվանումների մասին» 1997 թվականի մայիսի 12-ի ՀՕ-116-Ն օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը իրավաբանական անձանց պետական ռեզիստորում գրանցված՝ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների ֆիրմային անվանումների

AJV-24-34 2010-06-24

գրանցումն այդ օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ: 2000 թվականի հունվարի 6-ին ուժի մեջ մտած «Ֆիրմային անվանումների մասին 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-20 օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրավաբանական անձանց նախկինում գրանցված ֆիրմային անվանումների գրանցման գործողությունը մնում է ուժի մեջ, իսկ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրավաբանական անձանց չգրանցված ֆիրմային անվանումները նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են գրանցման՝ մինչև իրավաբանական անձի ընթացիկ գրանցումը:

«Հայե, «Հայաստանե, «հայկականե բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվություն ունեցող կազմակերպությունների մասին տեղեկությունները (ցանկերը) Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից պարբերաբար ներկայացվում են Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններ, որոնց հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից իրականացվում են տարեկան պետական տուրքի հաշվարկման, գանձման (օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում՝ բռնագանձման) աշխատանքները:

Հարկ է նշել, որ պետական տուրքի այս տեսակի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերը 2008 թվականին կազմել են 86.6 մլն դրամ, 2009 թվականին՝ 96.1 մլն դրամ, իսկ 2010 թվականի հունիսի 1-ի դրությամբ՝ շուրջ 40.0 մլն դրամ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածի 31-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ

31.«Հայե, «Հայաստանե, «հայկականե, «Հանրապետությունե, «հանրապետականե բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու համար	բազային տուրքի 600պատիկի չափով
--	-----------------------------------

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**« Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին օրենքի նախագծի**

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը):

Նախագծի ընդունումը պայմանավորված է « Հայե, « Հայաստանե, « հայկականե, «
Հանրապետությունե, «հանրապետականե բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային
անվան մեջ օգտագործելը խթանելու համար:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները:

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով « Հայե, « Հայաստանե, «
հայկականե, « Հանրապետությունե,«հանրապետականե բառերը եւ դրանց թարգմանությունները
ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու համար կազմակերպությունը
ամեն տարի պետք է վճարի բազային տուրքի 600 պատիկի չափով պետական տուրք:Ներկայումս
նման թույլտվություն ունեն մոտ 150 կազմակերպություն: 2009 թվականին Հայաստանի
Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից կատարված ստուգումները ցույց են տվել, որ
100- ից ավելի կազմակերպություններ չեն վճարել 700 մլն դրամի պետական տուրք: Այսինքն
ընդունված իրավական նորմը չի ընդունվում իրավաբանական անձանց կողմից: Բացի այդ չկա
վերահսկողության մեխանիզմ: Արդյունքում այդ պետական տուրքի գծով պետությունի մուտքերը
աննշան են:

1.2 Առկա խնդրի առաջարկվող լուծումը:

Նախագծով առաջարկվում է « Հայե, « Հայաստանե, « հայկականե, « Հանրապետությունե, «
հանրապետականե բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ
օգտագործելու թույլտվություն տալու համար պետական տուրքը սահմանվի ոչ թե յուրաքանչյուր
տարի, այլ միայն մեկ անգամ՝ թույլտվություն ստանալու պահին:

2. Կարգավորման առարկան

Նախագծի ընդունման դեպքում իրավական նորմի կիրառման հետ կապված խնդիրներ չեն առաջանա եւ կխթանվի «Հայե, «Հայաստանե, « հայկականե, « Հանրապետությունե, « հանրապետականե բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործումը ֆիրմային անվանումների մեջ:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ նախագծի ընդունման արդյունքում, վերոնշյալ պետական տուրքի գծով, պետական բյուջեի մուտքերը կավելանան: